

**ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/10

24 հունիսի 2014 թ.

Քննարկվեց «Վահրադյան Շին» ՍՊԸ 31.05.2014 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 18.04.2014 թ-ի թիվ 1425065 վարչական ակտի դեմ:

«Վահրադյան Շին» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարության /նախկին ՀՀ ԿԱ ՊԵԿ/ ՕՀՎ ավագ օպեր լիազոր Ա.Ալեքսանյանը, օպեր-լիազոր Ա.Սահակյանը 18.04.2014 թ-ին կազմել են թիվ 1425065 արձանագրությունը և վարչական ակտը, որով ընկերությանն առաջադրվել է վճարել ՀՀ պետական բյուջե 817.680 ՀՀ դրամ:

Վիճարկվող արձանագրությունը և վարչական ակտը կազմվել են օրենքի էական խախտումներով և ենթակա են վերացման:

Արձանագրությունը կազմած օպեր-լիազորները ներքին տեղափոխությունը համարել են վարչական իրավախախտում այն դեպքում, երբ ՀՀ օրենսդրության պահանջների տեսանկյունից այն ենթակա է գրանցման:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

Վիճարկվող արձանագրությամբ և վարչական ակտով պահանջվում է ընկերությունից կատարելու այնպիսի գործողություններ, որոնք ըստ էության չեն բխում ՀՀ հարկային օրենսդրությունից, ինչպես նաև առաջադրված պահանջը հակասում է ՀՀ վարչարարության և հարկային օրենսդրությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրում է կայացնել որոշում 18.04.2014 թ-ին կազմված թիվ 1425065 արձանագրությունը և նույնաթիվ վարչական ակտը վերացնելու մասին:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 18.04.2014 թ-ին կազմված թիվ 1425065 արձանագրության համաձայն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է.

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ից համաձայն էլեկտրոնային եղանակով դուրս գրված 18.01.2014 թ-ի թիվ Ա2033486759, 11.01.2014 թ-ի թիվ Ա6862130594, 06.03.2014 թ-ի թիվ Ա7334120354 և 24.03.2014 թ-ի թիվ Ա1616174937 հարկային հաշիվներով ապրանքներ է ստացել ք.Ստեփանավան, Չարենցի 175 հասցեի վրա, ընդհանուր գումարով 817680 դրամի: Նշված հաշիվներով ստացված ապրանքները հետագայում տեղափոխվել են ք.Երևան, Արա Սարգսյան 4 հասցե՝ ընկերության արտադրամաս, սակայն նշված տեղափոխումը չի ստացել համապատասխան գրանցում առաքվող տեղափոխվող ապրանքների գրանցման գրքում, քանի որ նշված հասցեի համար (առաքման վայր) ընկերությունը չունի ստացված համապատասխան գիրք: Խախտվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հավելվածի 7-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ապրանքների տեղափոխումն տեղի է ունեցել առանց բեռն ուղեկցող փաստաթղթերի ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 1-ին բաժնի պետի կողմից 18.04.2014 թ-ին ընդունվել է թիվ 1425065 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 817.680 դրամ:

Հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն. «Հարկ վճարողի կողմից սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող «Հավելված 4»-ով սահմանված կարգի խախտման՝ անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների (այսուհետ՝ ապրանքների) տեղափոխման կամ առաքման կամ առաքվող կամ տեղափոխվող ապրանքն ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցելու դեպքում խախտման հիմք հանդիսացող գործարքի կամ գործողության մասով գանձվում է տուգանք անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների գնի (արժեքի) 50 տոկոսի չափով: ...

Սույն հոդվածի կիրառման իմաստով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում կատարված գործարքը կամ գործողությունը համարվում է խախտման հիմք, եթե հարկային մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում արձանագրվել է, որ՝

1) գործարքը կամ գործողությունը օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու պահին կատարվում է առանց սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող «Հավելված 4»-ով սահմանված վավերապայմաններին բավարարող ուղեկցող փաստաթղթերի կամ

2) օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու պահին առկա է գործարքի կամ գործողության գծով ուղեկցող փաստաթուղթը, որը, սակայն, սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող «Հավելված 4»-ով սահմանված կարգով գրանցված չէ»:

Վերոգրյալից հետևում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքը կիրառելու համար անհրաժեշտ է որպեսզի առանց «Հավելված 4»-ով սահմանված վավերապայմաններին բավարարող ուղեկցող փաստաթղթերի գործարքը կամ գործողությունը հայտնաբերված լինի օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու պահին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 18.04.2014 թ-ի թիվ 1425065 արձանագրությունում նկարագրված խախտումը, որը հիմք է հանդիսացել վարչական ակտով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքը կիրառելու համար, հայտնաբերվել է ոչ թե օպերատիվ-հետախուզական

միջոցառում իրականացնելու պահին, այլ՝ ամիսներ անց: Այսինքն, քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքը, ըստ էության, կիրառելի չէ:

Բացի այդ, հիմնավորված չէ նաև այն հանգամանքը, թե վերոգրյալ հարկային հաշիվներով ապրանքները երբ են ստացվել (ամիսը և ամսաթիվը) ք.Ստեփանավան, Չարենցի 175 հասցեում, ինչպես նաև այդ ապրանքները հետագայում երբ են տեղափոխվել ք.Երևան, Արա Սարգսյան 4 հասցե:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն. «1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ ՈՒ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՎՎ 18.04.2014 թ-ի թիվ 1425065 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ